

«ԶԱՌ»

ՎԻՃԱԿԱԽԱՂԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

/13.04.18թ. համաձայնեցված լրացումով, 26.04.2018թ.
համաձայնեցված փոփոխություններով/

1. Դիմողի անվանումը, կազմակերպչի անվանումը, գտնվելու և գործունեության իրականացման վայրը.

Դիմողի անվանումը՝ «ԴԻՋԻԳԵՏՄ» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն:

Իրավաբանական հասցեն և գտնվելու վայրը՝ ք. Երևան, Ամիրյան 26:

Գործունեության իրականացման վայրը՝ ք. Երևան, Ամիրյան 26, ք. Երևան Կոմիտաս 60/2, ք. Երևան, Գայի պողոտա 16, ք. Երևան Բագրատունյաց 5/3, ք. Երևան Մաշտոց 5, ք. Երևան Տիգրան Պետրոսյան 25/5, ք. Երևան Մարգարյան 23/6, ք. Երևան Անդրանիկի փող., 148/2 շենք, ք. Երևան Ռուբինյանց 15/5, ք. Երևան Մալաթիա Սեբաստիա 141/5, ք. Երևան Օհանով 26/9, ք. Երևան Հ. Հովհաննիսյան 24/7, ք. Երևան, Շիրազի փող. 20/80 շենք, ք. Նոր Հաճն, Չարենցի 9/1, «Դիջիտեյլս» ՍՊԸ իրացման կետեր, «Հայ Փոստ» ՓԲԸ մասնաձյուղեր, «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ ՎՍԳ (Վաճառքի Սպասարկման Գրասենյակներ), «Պրես Ստենդ» ՍՊԸ իրացման կետեր:

2. Վիճակախաղի ֆիրմային անվանումը /լոգոն/, վիճակախաղի անվանումը.

Վիճակախաղի ֆիրմային անվանումը (լոգոն)՝ «Armenia Lottery», «Արմենիա Լոթերի»



«»:

Վիճակախաղի անվանումը՝ «ԶԱՌ»:

3. Վիճակախաղի տեսակը.

Վիճակախաղն իր տեսակով «Համակցված» վիճակախաղ է:

4. Վիճակախաղի կազմակերպման և անցկացման նկարագիրը.

4.1. Տոմսի՝ ակնթարթային մասով շահումը որոշելու կարգը:

Տոմսի վրա առկա է պաշտպանիչ շերտով ծածկված չորս խաղադաշտ (վեց խաղավանդակ), որոնց անվանումներն են «Խաղարկող», «Խաղացող», «Շահում» և «Բռնուս»:

Տոմսի ակնթարթային մասով շահումը որոշելու համար, մասնակիցը պետք է մաքրի խաղադաշտերի պաշտպանիչ շերտերը:

Տոմսն ակնթարթային մասով շահում է, եթե՝

- «Խաղացող» նշագրումով խաղադաշտի գառերի վրա առկա կետերի հանրագումարը մեծ է «Խաղարկող» նշագրումով խաղադաշտի գառերի վրա առկա կետերի հանրագումարից և որևէ մեկի գառերը գույգ չեն (այսինքն գառերի վրա առկա կետերի քանակները իրար հավասար չեն),
- «Խաղացող» նշագրումով գառերի պաշտպանիչ շերտերի տակ գույգ է (այսինքն գառերի վրա առկա կետերի քանակները իրար հավասար են), իսկ «Խաղարկող» նշագրումով գառերի պաշտպանիչ շերտերի տակ՝ ոչ:
- «Խաղացող» նշագրումով գառերի գույգը մեծ է «Խաղարկող» նշագրումով գառերի գույգից:

Նշված պայմաններով շահում ունենալու դեպքում շահումը կկազմի «Շահում» խաղադաշտում նշված թվին համապատասխան գումարը դրամային արտահայտությամբ կամ իրը:

Եթե «Խաղացող» նշագրումով գառերի վրա առկա կետերի հանրագումարը հավասար է «Խաղարկող» նշագրումով խաղավանդակի գառերի կետերի հանրագումարին (բացառությամբ եթե գույգ են միայն կամ «Խաղացող» կամ «Խաղարկող» նշագրումով խաղավանդակների գառերը), ապա տոմսը շահում է և «Շահում» դաշտում նշված գումարը

դրամային արտահայտությամբ կամ իրը, և «Բոնուս» խաղադաշտում նշված գումարը դրամային արտահայտությամբ կամ իրը:

Եթե «Շահում» նշագրումով խաղադաշտի պաշտպանիչ շերտի տակ հայտնաբերվի TV1-ից TV12 նշագրումներից որևէ մեկը, ապա անկախ տոմսի ակնթարթային մասով շահելու հանգամանքից տոմսին շահում չի տրվում, սակայն տոմսն իրավունք է ձեռք բերում մասնակցելու հեռուստախաղարկությանը:

Մնացած բոլոր դեպքերում տոմսը համարվում է չշահած:

4.2. Հեռուստախաղարկության մասի կազմակերպման և անցկացման նկարագիրը:

«ԶԱՌ» վիճակախաղի հեռուստախաղարկությունը իրականացվելու է 1-ից 12 թվերով համարակալված խաղաքարերով, որոնք ստուգվում և լցվում են հատուկ չթափանցող պարկի մեջ, որի դատարկ լինելը հավաստում են տվյալ վիճակահանության հանձնաժողովի անդամները: Վիճակահանությունն իրականացնելու համար պարկից հաջորդաբար հանվում է մեկ խաղաքար: Հեռուստախաղարկությունում շահում է այն տոմսը կամ տոմսերը, որում (որոնցում) «TV» գրառման կողքի թիվը համընկնում է պարկից հանված խաղաքարի թվի հետ: Եթե պարկից հանված խաղաքարով շահում չգրանցվի, ապա խաղաքարեր հանելը կշարունակվի այնքան, մինչև վերը նշված պայմանով կգրանցվի շահում: Հեռուստախաղարկության համար կազմակերպիչը կնախատեսի շահումային ֆոնդ, որը հավասարաչափ կբաշխվի վերոհիշյալ կարգով շահած տոմսերի միջև:

5. Վիճակախաղի խաղարկության անցկացման հրապարակման կարգը

«ԶԱՌ» վիճակախաղի հեռուստախաղարկությունը կհեռարձակվի (կհրապարակվի) «Հ2» (Հայկական երկրորդ) հեռուստաալիքի (ք. Երևան, Աջափնյակ Գ-3 թաղ., 3/1 հասցե) ուղիղ եթերով:

6. Վիճակախաղի տոմսի գինը

«ԶԱՌ» վիճակախաղի մեկ տոմսի գինն է 400 (չորս հարյուր) ՀՀ դրամ:

7. Շահումների բաշխումը ըստ շահումների տեսակների և չափի

Շահումների տեսակը նախատեսվում է գումարային և իրային:

Գումարային շահումների չափերը սահմանվում են 400 (չորս հարյուր) ՀՀ դրամից մինչև 10.000.000 (տասը միլիոն) ՀՀ դրամ:

Իրային շահումները կլինեն՝

1. կենցաղային տեխնիկա, կամ համակարգչային տեխնիկա, կամ ֆոտո/վիդեո/աուդիո տեխնիկա, կամ սպորտային գույք, կամ հեռահաղորդակցության տեխնիկա, կամ զվարճանքի տեխնիկա՝ միջոց, կամ

2. չշահագործված ավտոմեքենա՝ «Մերսեդես-Բենց» (Mercedes-Benz), «Վոլկվագեն» (Volkswagen), «Հյունդայի» (Hyundai), «Կիա» (Kia), «Մազդա» (Mazda), մակնիշի»:

Ակնթարթային մասի շահումների չափերը արտացոլված կլինեն տոմսի վրա, իսկ հեռուստախաղարկության մասի շահումների չափերը կհայտարարվեն հեռուստախաղարկության ժամանակ:

Կազմակերպիչը կապահովի տվյալ խաղարկության փաստացի իրացված տոմսերի արժեքի նվազագույնը 50% շահումային ֆոնդի բաշխում մասնակիցների միջև:

8. Վիճակախաղի խաղարկությունների անցկացման հաճախականությունը:

«ԶԱՌ» վիճակախաղի խաղարկությունը կանցկացվի տարեկան առավելագույնը երկու անգամ:

Կազմակերպիչը պարտավոր է յուրաքանչյուր խաղարկության տոմսերի թողարկումից առնվազն մեկ օր առաջ, Լիազոր մարմնին տեղեկացնել տվյալ վիճակախաղի խաղարկության համարի, հեռուստախաղարկության անցկացման տարեթվի, ամսվա, օրվա, ժամի մասին, ինչն արտացոլված կլինի նաև տվյալ խաղարկության տոմսերի վրա:

9. Վիճակախաղի խաղարկությունների անցկացման վայրը

«ԶԱՌ» վիճակախաղի խաղարկությունների անցկացման վայրը հեռուստախաղարկության անցկացման համապատասխան հեռուստաալիքի տաղավարի գտնվելու վայրն է՝ «ՀՀ» (Հայկական երկրորդ) հեռուստաալիք (ք. Երևան, Աջափնյակ Գ-3 թաղ., 3/1 հասցե):

10. Վիճակախաղի տոմսի նկարագիրը

Այս տոմսի վրա առկա է չորս խաղադաշտ (6 խաղավանդակ), որոնք պատված են պաշտպանիչ շերտերով: Խաղավանդակների վրա կամ դրանց խմբի վերևում գրված է տվյալ խաղադաշտի անվանումը:

«Խաղարկող» և «Խաղացող» նշագրումով խաղադաշտերի յուրաքանչյուրի պաշտպանիչ շերտի տակ առկա է 1-ից 6 հատ կետ, ինչպես գառի վրա, կետերի քանակը գրված կլինի նաև տառերով:

«Շահում» նշագրումով խաղավանդակի պաշտպանիչ շերտի տակ առկա են՝ որևէ թվային մեծություն «դրամ» նշագրմամբ կամ իրի անվանում կամ TV1-ից TV12 գրառումներից որևէ մեկը:

«Բռնուս» նշագրումով խաղավանդակի պաշտպանիչ շերտի տակ առկա են՝ որևէ թվային մեծություն «դրամ» նշագրմամբ կամ իրի անվանում:

Իրային շահումները կլինեն՝

1. կենցաղային տեխնիկա, կամ համակարգչային տեխնիկա, կամ ֆոտո/վիդեո/աուդիո տեխնիկա, կամ սպորտային գույք, կամ հեռահաղորդակցության տեխնիկա, կամ զվարճանքի տեխնիկա՝ միջոց, կամ

2. չշահագործված ավտոմեքենա՝ «Մերսեդես-Բենց» (Mercedes-Benz), «Վոլկվագեն» (Volkswagen), «Հյունդայի» (Hyundai), «Կիա» (Kia), «Մազդա» (Mazda) մակնիշի:

Տոմսի վրա առկա է նաև պաշտպանիչ շերտով ծածկված «ԶՋՆՋԵԼ» նշագրումով 1 դաշտ, որի պաշտպանիչ շերտի տակ նշված են տոմսի սերիան, համարը և շտրիխ-կոդը:

Տոմսը կպարունակի նաև «Վիճակախաղերի մասին» ՀՀ օրենքով սահմանված պարտադիր այլ պայմաններ:

Տոմսի արտաքին տեսքը որոշում է կազմակերպիչն իր հայեցողությամբ: Տոմսի վրա առկա՝ օրենքով անհրաժեշտ նշումները, համարվում են կանոնակարգի անբաժանելի մաս:

11. Շահումները տալու վայրը, ժամկետը

Ակնթարթային մասի շահումները կտրվեն մինչև հեռուստախաղարկության մասի շահումների վճարման վերջին օրը ներառյալ:

Հեռուստախաղարկության մասի շահումները կտրվեն հեռուստախաղարկության կայացման հաջորդ օրվանից սկսած՝ 30 օրվա ընթացքում:

Շահումները կտրվեն ընկերության գրասենյակից՝ ք. Երևան, Ամիրյան 26, իսկ մանր (մինչև 20000 ՀՀ դրամ) շահումները՝ նաև ք.Երևան Կոմիտաս 60/2, ք.Երևան, Գայի պողոտա 16, ք.Երևան Բագրատունյաց 5/3, ք.Երևան Մաշտոց 5, ք.Երևան Տիգրան Պետրոսյան 25/5, ք.Երևան Մարգարյան 23/6, ք. Երևան Անդրանիկի փող., 148/2 շենք, ք.Երևան Ռուբինյանց 15/5, ք.Երևան Մալաթիա Սեբաստիա 141/5, ք.Երևան Օհանով 26/9, ք. Երևան Հ. Հովհաննիսյան 24/7, ք.Երևան, Շիրազի փող. 20/80 շենք, ք.Նոր Հաճն, Չարենցի 9/1

հասցեներից, «Դիջիտեյլս» ՍՊԸ իրացման կետերից, «Հայ Փոստ» ՓԲԸ մասնաձյուղերից, «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ ՎՄԳ-երից (Վաճառքի Սպասարկման Գրասենյակներից), «Պրես Ստենդ» ՍՊԸ իրացման կետերից:

12. Տոմսը ենթակա չէ վճարման, եթե՝

ա. Տոմսն էականորեն վնասված է: Վնասվածքը համարվում է էական, եթե բացակայում է տոմսի որևէ հատված (այսինքն՝ տոմսն ամբողջական չէ):

բ. Կազմակերպչի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ խախտված է տոմսի՝ շահելու պատահականության սկզբունքը, այսինքն՝ տոմսի վրա կատարվել է ֆիզիկա-քիմիական մեթոդների կամ տեխնիկական միջոցների կիրառում կամ ներկայացված տոմսը կեղծված է (առաջացնում է պատասխանատվություն ՀՀ օրենսդրությամբ):

գ. Մաքրված է տոմսի «Չջնջել» նշագրումով դաշտը:

13. Վիճակախաղի կազմակերպչի իրավունքներն ու պարտականությունները.

13.1. Վիճակախաղի կազմակերպչի իրավունքները՝

1. Տոմսը ենթարկել փորձաքննության:

2. Շահող մասնակցից պահանջել ներկայացնելու անձնագիր կամ անձը հաստատող օրենքով նախատեսված այլ փաստաթուղթ:

3. Չբավարարել շահումների վճարման ժամկետից (կանոնակարգի կետ 11) ուշ ներկայացված շահումը ստանալու պահանջը:

4. Չվճարել վճարման ոչ ենթական տոմսը:

5. Հիմք չընդունել առանց կազմակերպչի մասնակցության անցկացված փորձաքննության եզրակացությունը:

13.2 Վիճակախաղի կազմակերպչի պարտականությունները՝

1. Վիճակախաղի տոմսի վրա նշված ժամկետում կազմակերպել և անցկացնել վիճակախաղի խաղարկությունը (ֆորս մաժորային՝ կազմակերպչից անկախ իրավիճակներում, խաղի տեղափոխման մասին ողջամիտ ժամկետում հայտնել մասնակիցներին, Լիազոր մարմնին),

2. Շահողի ցանկությամբ պահպանել նրա շահման փաստի և չափի (արժեքի) գաղտնիությունը՝ բացի օրենքով նախատեսված դեպքերի:

3. Տվյալ խաղարկության հեռուստախաղարկության կայացումից առնվազն 4 ժամ առաջ ինչ-ինչ պատճառներով մասնակցի կողմից գնված տոմսը (տոմսերը)՝ «ԴԻՋԻԳԵՅՍ» ՍՊԸ-ին հետ վերադարձնելու դեպքում, ընդունել վերադարձը՝ փոխհատուցելով վերադարձվող տոմսի (տոմսերի) գինը, եթե տոմսի արտաքին տեսքը ենթարկված չէ որևէ փոփոխության (այդ թվում՝ անվնաս է տոմսի բոլոր դաշտերի պաշտպանիչ շերտը), տոմսը պատռված կամ որևէ այլ կերպ վնասված չէ:

4. Փոխհատուցել մասնակցին սույն կանոնակարգի պայմաններին չբավարարող՝ տպագրական խոտանի հետևանք հանդիսացող տոմսի գինը:

5. Տոմսը փորձաքննության համար վերցնելու դեպքում՝ մասնակցին տրամադրել տեղեկանք (արձանագրություն) այդ մասին:

6. Վիճակախաղի կազմակերպչի պարտավորությունները մասնակցի նկատմամբ դադարում են հետևյալ հիմքերից յուրաքանչյուրի դեպքում.

ա. կազմակերպիչը շահող մասնակցին վճարել է տոմսի շահումը,

բ. տոմսը շահում չունի,

գ. տոմսը վճարման ենթակա չէ,

դ. սույն կանոնակարգով նախատեսված կարգով մասնակցին փոխհատուցվել է տոմսի գինը:

7. Խաղը կազմակերպել և անցկացնել սույն կանոնակարգին համապատասխան:

14. Վիճակախաղի մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները.

14.1. Վիճակախաղի մասնակիցների իրավունքները.

1. Շահումները ստանալ ք. Երևան, Ամիրյան 26 հասցեից, իսկ մանր (մինչև 20000 ՀՀ դրամ) շահումները՝ նաև ք.Երևան Կոմիտաս 60/2, ք.Երևան, Գայի պողոտա 16, ք.Երևան Բազրատունյաց 5/3, ք.Երևան Մաշտոց 5, ք.Երևան Տիգրան Պետրոսյան 25/5, ք.Երևան Մարգարյան 23/6, ք. Երևան Անդրանիկի փող., 148/2 շենք, ք.Երևան Ռուբինյանց 15/5, ք.Երևան Մալաթիա Մեքաստիա 141/5, ք.Երևան Օհանով 26/9, ք. Երևան Հ. Հովհաննիսյան 24/7, ք.Երևան, Շիրազի փող. 20/80 շենք, ք.Նոր Հաճն, Չարենցի 9/1 հասցեներից, «Դիջիտելյու» ՍՊԸ իրացման կետերից, «Հայ Փոստ» ՓԲԸ մասնաձյուղերից, «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ ՎՄԳ-երից (Վաճառքի Սպասարկման Գրասենյակներից), «Պրես Ստենդ» ՍՊԸ իրացման կետերից:

2. Պահանջել պահպանել իր շահման փաստի և չափի (արժեքի) գաղտնիությունը՝ բացի օրենքով նախատեսված դեպքերից:

3. Տվյալ խաղարկության հեռուստախաղարկության կայացումից առնվազն 4 ժամ առաջ «ԴԻՋԻԳԵՅՄ» ՍՊԸ-ին հետ վերադարձնել գնված տոմսը (տոմսերը) և ստանալ վերադարձվող տոմսի (տոմսերի) գինը, եթե տոմսի արտաքին տեսքը ենթարկված չէ որևէ փոփոխության (այդ թվում՝ անվնաս է տոմսի բոլոր դաշտերի պաշտպանիչ շերտը), տոմսը պատռված կամ որևէ այլ կերպ վնասված չէ:

4. Կազմակերպչից պահանջել տոմսը փորձաքննության հանձնելու վերաբերյալ տեղեկանք (արձանագրություն):

5. Պահանջել փոխհատուցում սույն կանոնակարգի պայմաններին չբավարարող, տպագրական խոտանի հետևանք հանդիսացող տոմսի գնի չափով:

14.2 Վիճակախաղի մասնակիցների պարտականությունները.

1. Նախքան վիճակախաղի տոմսի ձեռք բերումը ստուգել տոմսի արտաքին տեսքը (տոմսը վճարման ոչ ենթակա դարձնող հայտանիշների բացակայության հանգամանքը): Տոմսի ձեռքբերումից հետո տոմսի՝ վճարման ոչ ենթակա դարձնող հայտանիշների առկայության համար պատասխանատվությունը կրում է մասնակիցը:

2. Շահումը ստանալու համար ներկայացնել տոմսը բարվոք վիճակում (առանց սույն կանոնակարգով սահմանված՝ տոմսը վճարման ոչ ենթակա դարձնող հայտանիշների), իսկ անհրաժեշտության դեպքում՝ ներկայացնել նաև անձնագիր կամ անձը հաստատող օրենքով նախատեսված այլ փաստաթուղթ:

3. Շահումների վճարման պահանջով դիմել՝

1) ակնթարթային մասով շահելիս՝ մինչև հեռուստախաղարկության մասի շահումների վճարման վերջին օրը ներառյալ,

2) հեռուստախաղարկությունում շահելիս՝ հեռուստախաղարկության կայացման հաջորդ օրվանից սկսած՝ 30 օրվա ընթացքում:

4. Փորձաքննություն անցկացնելու անհրաժեշտության դեպքում տոմսը հանձնել կազմակերպչին:

5. Ենթարկվել վիճակախաղի կազմակերպման և անցկացման սույն կանոնակարգի կանոններին:

6. Ապահովել կազմակերպչի մասնակցությունը տոմսը վճարման ոչ ենթակա դարձնող հայտանիշների պարզման մասնակցի նախաձեռնությամբ իրականացվող փորձաքննությանը:

Շահումը որոշելու կարգը, շահումների վճարման վայրը, կարգը և ժամկետը

1. Ակնթարթային մասի կազմակերպման և անցկացման նկարագիրը:

Տոմսի ակնթարթային մասով շահումը որոշելու կարգը:

Տոմսի վրա առկա է պաշտպանիչ շերտով ծածկված չորս խաղադաշտ (վեց խաղավանդակ), որոնց անվանումներն են «Խաղարկող», «Խաղացող», «Շահում» և «Բռնուս»:

Տոմսի ակնթարթային մասով շահումը որոշելու համար, մասնակիցը պետք է մաքրի խաղադաշտերի պաշտպանիչ շերտերը:

Տոմսն ակնթարթային մասով շահում է, եթե՝

- «Խաղացող» նշագրումով խաղադաշտի գառերի վրա առկա կետերի հանրագումարը մեծ է «Խաղարկող» նշագրումով խաղադաշտի գառերի վրա առկա կետերի հանրագումարից և որևէ մեկի գառերը զույգ չեն (այսինքն գառերի վրա առկա կետերի քանակները իրար հավասար չեն),
- «Խաղացող» նշագրումով գառերի պաշտպանիչ շերտերի տակ զույգ է (այսինքն գառերի վրա առկա կետերի քանակները իրար հավասար են), իսկ «Խաղարկող» նշագրումով գառերի պաշտպանիչ շերտերի տակ՝ ոչ:
- «Խաղացող» նշագրումով գառերի զույգը մեծ է «Խաղարկող» նշագրումով գառերի զույգից:

Նշված պայմաններով շահում ունենալու դեպքում շահումը կկազմի «Շահում» խաղադաշտում նշված թվին համապատասխան գումարը դրամային արտահայտությամբ կամ իրը:

Եթե «Խաղացող» նշագրումով գառերի վրա առկա կետերի հանրագումարը հավասար է «Խաղարկող» նշագրումով խաղավանդակի գառերի կետերի հանրագումարին (բացառությամբ եթե զույգ են միայն կամ «Խաղացող» կամ «Խաղարկող» նշագրումով խաղավանդակների գառերը), ապա տոմսը շահում է և «Շահում» դաշտում նշված գումարը դրամային արտահայտությամբ կամ իրը, և «Բռնուս» խաղադաշտում նշված գումարը դրամային արտահայտությամբ կամ իրը:

Եթե «Շահում» նշագրումով խաղադաշտի պաշտպանիչ շերտի տակ հայտնաբերվի TV1-ից TV12 նշագրումներից որևէ մեկը, ապա անկախ տոմսի ակնթարթային մասով շահելու հանգամանքից տոմսին շահում չի տրվում, սակայն տոմսն իրավունք է ձեռք բերում մասնակցելու հեռուստախաղարկությանը:

Մնացած բոլոր դեպքերում տոմսը համարվում է չշահած:

Շահումների տեսակը նախատեսվում է գումարային և իրային:

2. Հեռուստախաղարկության մասի կազմակերպման և անցկացման նկարագիրը

«ԶԱՌ» վիճակախաղի հեռուստախաղարկությունը իրականացվելու է 1-ից 12 թվերով համարակալված խաղաքարերով, որոնք ստուգվում և լցվում են հատուկ չթափանցող պարկի մեջ, որի դատարկ լինելը հավաստում են տվյալ վիճակահանության հանձնաժողովի անդամները: Վիճակահանությունն իրականացնելու համար պարկից հաջորդաբար հանվում է մեկ խաղաքար: Հեռուստախաղարկությունում շահում է այն տոմսը կամ տոմսերը, որում (որոնցում) «TV» գրառման կողքի թիվը համընկնում է պարկից հանված խաղաքարի թվի հետ: Եթե պարկից հանված խաղաքարով շահում չգրանցվի, ապա խաղաքարեր հանելը կշարունակվի այնքան, մինչև վերը նշված պայմանով կգրանցվի շահում: Հեռուստախաղարկության համար կազմակերպիչը կնախատեսի շահումային ֆոնդ, որը հավասարաչափ կբաշխվի վերոհիշյալ կարգով շահած տոմսերի միջև:

«ԶԱՌ» վիճակախաղի խաղարկությունը կանցկացվի տարեկան առավելագույնը երկու անգամ:

3. ՈՒՇԱՂՐՈՒԹՅՈՒՆ

Տոմսը ենթակա չէ վճարման, եթե՝

ա. Տոմսն էականորեն վնասված է: Վնասվածքը համարվում է էական, եթե բացակայում է տոմսի որևէ հատված (այսինքն՝ տոմսն ամբողջական չէ):

բ. Կազմակերպչի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ խախտված է տոմսի՝ շահելու պատահականության սկզբունքը, այսինքն՝ տոմսի վրա կատարվել է ֆիզիկա-քիմիական մեթոդների կամ տեխնիկական միջոցների կիրառում կամ ներկայացված տոմսը կեղծված է (առաջացնում է պատասխանատվություն ՀՀ օրենսդրությամբ):

գ. Մաքրված է տոմսի «Զննչել» նշագրումով դաշտը:

4. Ակնթարթային մասի շահումները կտրվեն մինչև հեռուստախաղարկության մասի շահումների վճարման վերջին օրը ներառյալ:

Հեռուստախաղարկության մասի շահումները կտրվեն հեռուստախաղարկության կայացման հաջորդ օրվանից սկսած՝ 30 օրվա ընթացքում:

Շահումները կտրվեն ընկերության գրասենյակից՝ ք. Երևան, Ամիրյան 26 հասցեից, իսկ մանր (մինչև 20000 ՀՀ դրամ) շահումները՝ նաև ք. Երևան Կոմիտաս 60/2, ք. Երևան, Գայի պողոտա 16, ք. Երևան Բազրատունյաց 5/3, ք. Երևան Մաշտոց 5, ք. Երևան Տիգրան Պետրոսյան 25/5, ք. Երևան Մարգարյան 23/6, ք. Երևան Անդրանիկի փող., 148/2 շենք, ք. Երևան Ռուբինյանց 15/5, ք. Երևան Մալաթիա Մեբաստիա 141/5, ք. Երևան Օհանով 26/9, ք. Երևան Հ. Հովհաննիսյան 24/7, ք. Երևան, Շիրազի փող. 20/80 շենք, ք. Նոր Հաճն, Չարենցի 9/1 հասցեներից, «Դիջիտել» ՍՊԸ իրացման կետերից, «Հայ Փոստ» ՓԲԸ մասնաճյուղերից, «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ ՎՍԳ-երից (Վաճառքի Մպասարկման Գրասենյակներից), «Պրես Ստեյն» ՍՊԸ իրացման կետերից:

Անհրաժեշտության դեպքում շահող մասնակիցը պարտավոր է ներկայացնել անձնագիր կամ անձը հաստատող օրենքով նախատեսված այլ փաստաթուղթ:

5. Տոմսում չներառված մնացած պայմանները կարգավորվում են «ԶԱՌ» վիճակախաղի կազմակերպման և անցկացման կանոնակարգով՝ համաձայնեցված ՀՀ Ֆինանսների նախարարության հետ:

«ԶԱՌ» N 2 վիճակախաղի հեռուստախաղարկությունը կկայանա «Հ2» (Հայկական երկրորդ) (ք. Երևան, Աջափնյակ Գ-3 թաղ., 3/1 հասցե) հեռուստաալիքի ուղիղ եթերով « » _____ 2018թ. ժամը _____-ին: Գինը՝ 400 ՀՀ դրամ:

Վիճակախաղի կազմակերպիչ՝ «ԴԻՋԻԳԵՅՍ» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն:



